

Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի հիմնման ծրագիր

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հետ համատեղ մշակել է Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ստեղծման ծրագիրը: Ծրագրով նախատեսվում է «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում հիմնել Հայաստանի Հանրապետությունում ռադիոիզոտոպների արտադրության համալիրից, պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆներով համալրված ախտորոշիչ կենտրոնից և ուռուցքաբանական կլինիկայից բաղկացած **Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն:**

Ծրագրի շրջանակում իրականացվել են հետևյալ քայլերը.

- ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի N 1424-Ն որոշմամբ հաստատվել է Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն ստեղծելու ծրագիրը,
- ՀՀ կառավարության և բելգիական «ՔեյԲՍի ԷնՎի» բանկի միջև 2010թ. ստորագրվել է վարկային համաձայնագիր, ինչպես նաև ստորագրվել է ՀՀ կառավարության և «ԱյԲիԷյ Մոլեկուլյար» ընկերության միջև պայմանագիրը,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ հիմնադրվել է «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը,
- ՀՀ կառավարության 14.04.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի N 1424-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 388-Ն որոշմամբ լուծվել է ռադիոիզոտոպների արտադրությունը կազմակերպելու նպատակով ընկերությանը տրամադրվելիք հողատարածքի հարցը: